ԱՐՂՈՒՆ ԽԱՆԻ ԴԵՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԴԱՎԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԳՐԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՆԱԻՐԱ ԹԱՄԱՄՅԱՆ

XIII դ. կեսերին Առաջավոր Ասիայում ստեղծված մոնղոլական մեծ պետության՝ Իլխանության կամ Էլդանության կազմի մեջ էր մտնում Հայաստանը՝ ի թիվս Պարսկաստանի, Միջագետքի, Ասորիքի մի մասի, Փոքր Ասիայի արևելյան շրջանների, Վրաստանի, Աղվանքի: 1289 թ. այդ պետության ղեկավարի՝ իլխանի՝ Հուլավյան հարստության չորրորդ ներկայացուցիչ Արղուն խանի (1284–1291) դեմ զորապետ Բուղայի կազմակերպած դավադրությունը դաժանորեն ճնշվել էր Մուղանի դաշտում, որի ժամանակ զգալի տուժել էին տեղի հայ և վրացի բնակիչները:

Գերագույն իշխանություն ձեռք բերելու նպատակ հետապնդող հերթական այս խռովությունն արձագանք է գտել հայ միջնադարյան գրականության մեջ: Ժամանակակից երկու հեղինակներ՝ Ստեփանոս Օրբելյանը և Ֆրիկը, սերունդներին բավականին մանրամասն տեղեկություններ են թողել այս իրադարձության ու նրա ունեցած ազդեցության վերաբերյալ: Ստ. Օրբելյանը մոնղոլ վերնախավի ոչ միայն արտաքին քաղաքականության, այլև ներիշխանական հարաբերությունների մասին խոսում է նախ «Ժամանակագրությունում»[1], ապա իր գլխավոր՝ «Պատմութիւն տանն Սիսական»[2] պատմական լայն ընդգրկում ունեցող երկասիրության գլուխներից մեկում, որը հեղինակն անվանել է «Վասն մեծի նախարարութեանն Օրբէլեանց, եթէ ուստի էին և որպէս, և վասն գալոյ նոցա յաշխարհս յայս, և վասն բազում բանից և գործոց նոցա»[3], ուր պատմում է իր նախնիների, նրանց կատարած գործերի մասին՝

---

[1] *Տե՛ս Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի (այսուհետև՝ Ժամանակագրություն), հրատարակության համար պատրաստեց պատմ. գիտ. թեկնածու՝ Աշ. Աբրահամյանը, Երևան, 1942:*

[2] *Տե՛ս Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1861 (այսուհետև՝ Օ ր բ ե լ յ ա ն, 1861), էջ 315: Այս երկը տարբեր հրատարակություններում տարբեր կերպ է անվանված՝ «Պատմութիւն նահանգին Սիսական» [տե՛ս Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, ի լոյս ընծայեաց հանդերձ ծանոթութեամբք Կարապետ Վարդապետ Շահնազարեանց՝ միաբան սրբոյ Էջմիածնի, Փարիզ, 1859 (այսուհետև՝ Օ ր բ ե լ յ ա ն, 1859)]: Մկրտիչ Էմինը երկու գրչագիր և արդեն տպագիր օրինակների հիման վրա հրատարակել է պատմության համեմատական բնագիրը՝ նպատակահարմար համարելով վերնագրել «Պատմութիւն տանն Սիսական» (տե՛ս Օ ր բ ե լ յ ա ն, 1861), աշխարհաբար հրատարակությունն ունի «Սյունիքի պատմություն» վերնագիրը [տե՛ս Ս տ ե փ ա ն ո ս Օ ր բ ե լ յ ա ն. Սյունիքի պատմություն, թարգմ., ներած. և ծանոթ. Ա. Ա. Աբրահամյանի, Երևան, 1986 (այսուհետև՝ Օ ր բ ե լ յ ա ն, 1986], իսկ հեղինակը հիշատակարանում՝ ՀԳ գլխում, իր գործը կոչում է «Յիշատակաց մատեան» [տե՛ս օրինակ՝ Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի (այսուհետև՝ ՄՄ) ձեռ. № 6271, թ. 333 ա]:*

[3] *Պատմության այս գլուխը շատ մեծ տարածում ունի. կան ընդօրինակություններ ձեռագիր մատյաններում (տե՛ս օրինակ՝ ՄՄ, ձեռ. №№ 784, 791, 1482, 1535, 1721, 1724, 2560, 3070, 3498, 4584, 6882, 6995,*

առավել ծանրանալով իր ապրած ժամանակաշրջանի վրա, երբ Հայաստանը մոնղոլական լծի տակ էր:

Ֆրիկն այս իրադարձության թարմ տպավորությունների ներքո գրել է «Վասն Արղուն դանին և Բուղային»[4] չափածո ստեղծագործությունը, ուր պատմական փաստերի հետ մեկտեղ հաղորդում է ինքնակենսագրական որոշ տեղեկություններ:

Վերոհիշյալ գործերն ունեն սկզբնաղբյուրի արժեք, քանի որ նկարագրված դեպքերը ժամանակակիցների վկայություններ են: Հետագայի այլ հեղինակներ ևս խոսել են այս մասին, սակայն կա՛մ շատ համառոտ, կա՛մ օգտվել են նախորդներից. «Ի թվին ՉԼԷ[5] սպանին զՉինքսանպուղայն, զՋողկապն և զԹաղա Տամարն»[6], «Կոտորեաց Արղունն զՋալալտայքն և այլ բազում նուինայս յաղագս ապստամբութեան, ընդ որս և զանմեղ թագաւորն Վրաց զԴեմետրէ սպանին»[7]:

Պատմական այս դիպվածին գրականագիտական տեսանկյունից անդրադարձել են Մ. Աբեղյանը[8], Տ. Մուշկամբարյանը[9], երբ խոսել են Ֆրիկի հիշյալ քերթվածի մասին, իսկ Ա. Հովհաննիսյանը պատմաքննական լույսի ներքո է լուսաբանել այն[10] ՝ կրկին Ֆրիկի առիթով:

Ստ. Օրբելյանը վկայում է. «Ի թագաւորելն Արղունին և ի տիրելն ի վերայ ամենայն աշխարհաց և ի սատակելն զթշնամիսն ՝ էր բուն պատճառն և զաւրաւիգն Բուղայն կոչեցեալ, որ յետոյ Չինքսան անուանեցին»[11]: Այս Բուղան գործողությունների կենտրոնական դեմքն է, որի նկատմամբ իլխանական բարեհաճությունը սկիզբ էր առել դեռևս Աբաղա խանից: Ռաշիդ ադ դինը ՝ Ղազան խանի (1295–1304) վեզիրը, Հուլավյանների պալատական ժամանակագիրը, գրում է, որ Ջալաիր ցեղից սերող էմիր Բուղան դեռ երեխա ժամանակ գրկվել էր հորից, և Աբաղա խանը հովանավորել

---

*7084, 8384, Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի ձեռ. №№ 427, 562, Բրիտանական թանգարանի ձեռ. № 118, Բոդլեյան գրադարանի ձեռ. № 95 և այլն), թարգմանվել է լատիներեն, ֆրանսերեն, ռուսերեն (*История князей Орбелянъ, извлеченіе изъ сочиненій Стефана Сюнійскаго, армянскаго писателя XIII века, перевелъ съ армянскаго Х. Іоаннесовъ, М., 1881*):*

[4] *Ֆ ր ի կ. Տաղեր, առաջաբանը, բնագրի պատրաստումը, հավելվածը Ա. Ղանալանյանի (այսուհետև ՝ Ֆ ր ի կ), Երևան, 1982, էջ 72:*

[5] *Այստեղ թվական տվյալի անստուգություն կա. դեպքը կատարվել է հայոց ՉԼԸ (738) ՝ ընդհանուր 1289 թվին [տե՛ս Օ ր բ ե լ յ ա ն, 1861, էջ 315, նաև* Р а ш и д - а д - д и н. Сборник летописей *(այսուհետև ՝* Р а ш и д - а д - д и н *), т. III, М.-Л., 1947, с. 121]:*

[6] *Անանուն ժամանակագրություն, կազմեցին Հովհ. Մանվելյան, Հար. Աբրահամյան, Երևան, 1940, էջ 26:*

[7] *Մխիթար Այրիվանեցւոյ պատմութիւն հայոց, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1860, էջ 68-69:*

[8] *Տե՛ս Մ. Ա բ ե ղ յ ա ն. Հայոց հին գրականության պատմություն, հ. II, Երևան, 1946, էջ 260, 543-546:*

[9] *Տե՛ս Տ ի ր ա յ ր է պ ս. Մոռացված մի հայ երգիչ.– «Արարատ», 1918, №№ Ա-Գ, Դ-ԺԲ, նաև Ֆ ր ի կ. Դիվան, լույս ընծայեց առաջին անգամ ամբողջական բնագրով, ուսումնասիրություններով, հավելվածներով և բառարանով Տիրայր արքեպիսկոպոս, Նյու Յորք, 1952, էջ 44-74:*

[10] *Տե՛ս Ա. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. Ֆրիկը պատմաքննական լույսի տակ, Երևան, 1955: Այս իրադարձությանն անդրադարձել, Օրբելյանի ու Ֆրիկի երկերը ՝ որպես սկզբնաղբյուր, օգտագործել են Մ. Չամչյանցը (Հայոց պատմություն, հ. Գ, Երևան, 1984 էջ 282), Հ. Մանանդյանը (Երկեր, հ. Գ, Երևան, 1977, էջ 315) և ուրիշներ:*

[11] *ՄՄ, ձեռ. № 8481, թ. 212 ա, նաև Ժամանակագրություն, էջ 30:*

էր, դարձրել մեծատուն, ապա նրան էր վստահվել նարին գանձարանը[12], շնորհվել ալ-թամգա: Ստ. Օրբելյանը Բուղայի ցեղի մասին ասում է. «...և այն ազգ յոլով էր քան զամենայն ազգս և յաղթող», թեպետ անվանում է Ջալակիր, ոչ թե Ջալաիր. «Եւ էր այրն այն ազամբ Ջալակիր կոչեցեալ»[13]: Արղուն խանի օրոք Բուղան ավագ էմիրներից մեկն էր[14], շատ մեծ լիազորությունների տեր, տիրապետում էր իշխանական այնպիսի հզոր լծակների, որ իր ձեռքում էր կենտրոնացրել պետության ֆինանսական ողջ հոսքերը, ուժային կառույցները: Հավանաբար, այս անսահման իշխանության, ապա նաև կազմակերպած դավադրության մասին տարածված լուրերն են հետզհետե ուռճացել այն աստիճան, որ նրան համարել են Արղունից հետո գահին տիրած խան: Նման տեղեկության հանդիպում ենք մի մանր ժամանակագրության մեջ, որը հեղինակել է Կիլիկիայի Հեթում II թագավորը[15]. «Արղուէն յետ Թուլար Բուղան նստաւ: Յետ Թուլար Բուղային Թողթան նստաւ...»[16]:

Բուղայի հանդուգն վարքագիծն ուներ իր պատճառները. Արղուն խանը Բուղայի անմիջական աջակցությամբ էր բանտից ազատվել ու գահ բարձրացել՝ հաղթելով հորեղբորը՝ Թագուդար-Ահմեդ խանին (1282–1284) և նրա կողմնակիցներին: Հետագայում գահակալը վարձահատույց էր եղել՝ տալով նրան կոչումներ և իշխանություն. «Սա (Բուղան – Ն. Թ.) ի մահու և ի կապանաց հանեալ զնա (Արղունին – Ն. Թ.), թագաւորեցոյց ի վերայ ամենայնի: Եւ սակս այն մեծի երախտեացն պատուեցաւ և փառաւորեցաւ ի նմանէ և եդաւ ի վերայ ամենայն գործոյ և տանն արքունի և զաւրաց և աշխարհաց իւրոց, այնքան, զի միայն յանուանէն ինքն ունէր զտերութիւն և Արղունն բացի զբաւսնելոյն ի խաղս և ի թատերս և յորսս, որպէս աւրէնն է հեթանոսաց, այլ ինչ ոչ հոգայր և ցնորէր, այլ ամենայն նմա ապաստան լինէր»[17]: Բուղան առավել հաջողությունների հասավ Սահիպ Դիվանի՝ Մուհամմեդ Շամս ադ դին Ջուվեյնու մահից հետո[18], քանի որ վերջինս շատ մեծ դեր ուներ պետության մեջ: Անցյալում կատարած խիզախ արարքները այժմ առիթ էին տալիս Բուղային տեր զգալու. ամեն ինչ պետք է կատարվեր նրա գիտությամբ. անգամ իլխանական հրամաններն ու

---

[12] *Արքունական գանձարանը այդ ժամանակ առանձին մասերից էր բաղկացած, և այն մասը, ուր պահվում էին առավել թանկարժեք գանձերը, նարինն էր (տե՛ս* Р а ш и д - а д - д и н, с. 299*):*

[13] *Ժամանակագրություն, էջ 30:*

[14] Р а ш и д - а д - д и н, с. 92.

[15] *Հեղինակային պատկանելությունն ակնհայտ է դառնում երկի առաջին իսկ նախադասություններից. «Ի թվին Հայոց ՉՃՂԹ (1250) ի յունիս ԻԹ (29) սպանին զպարոն Հեթումն, տէր Լամբրունին, պապն իմ» (Մանր ժամանակագրություններ (XIII-XVIII դդ.), հ. II, կազմեց Վ. Հակոբյան, Երևան, 1956, էջ 511): Հեթում պատմիչի և Հեթում թագավորի մասին տե՛ս Մանր ժամանակագրություններ (XIII-XVIII դդ.), հ. I, կազմեց Վ. Հակոբյան, Երևան, 1951, էջ 65-73:*

[16] *Մանր ժամանակագրություններ (XIII-XVIII դդ.), հ. II, էջ 512: Վ. Հակոբյանը այս առիթով 533-րդ էջում տալիս է հետևյալ ծանոթագրությունը. «Այստեղ ակնարկվում է Բուղայի դավադրությունը, բայց սա Արղունից հետո չի իշխել (մանրամասն տե՛ս ՄԺ, 1, էջ 48-49)»: Հղված են ոմն Ստեփանոս եպիսկոպոսի «Ժամանակագրության» վերջին էջերը: Իրականում այս երկի հեղինակային պատկանելության հարցը, հօգուտ Ստեփանոս Օրբելյանի, այժմ արդեն լուծված է (տե՛ս Է. Բ ա ղ դ ա - ս ա ր յ ա ն . XIII դարի մի ժամանակագրության հեղինակի մասին.– ՊԲՀ, 1971, № 2, էջ 210):*

[17] *Ժամանակագրություն, էջ 30:*

[18] *Տե՛ս* Р а ш и д - а д - д и н, с. 119.

կարգադրությունները չէին կատարվում առանց էմիրների էմիր կամ բեկլար-բեկի՝ չինքսան[19] Բուղայի իմացության: Ստ. Օրբելյանն իր Պատմության մեջ նրան անվանում է մեծ զորապետ և «Չինքսանն, որ կոչի աւագաց աւագ կամ տերանց տէր»[20], իսկ «Ժամանակագրության» մեջ գրում է. «Ապա ժողովեալ յինքն՝ զաւրացաւ, բարձրացաւ, գոռոզացաւ, հպարտացաւ այրն այն. և ոչ կարաց հանդուրժել իրացն, այլ կամեցաւ անձամբ հափշտակել յինքն և զաթոռ թագաւորութեան և զբնիկ այրսն արմատաքի ջնջել»[21]: Նույնիսկ այն աստիճան էր մեծամտացել, որ արհամարհանքով էր վերաբերվում Արղունի անձնական էմիրներին: Սրանք էլ իրենց հերթին հետևում էին Բուղային ու նրա եղբորը՝ Արուխին (որը միաժամանակ եղբոր գլխավոր դաշնակիցն էր), բոլոր կասկածելի քայլերի մասին տեղեկացնում էր իլխան Արղունին և Բուղայից վրեժխնդիր լինելու հարմար պահի էին սպասում. Բուղան ժամանակին վիրավորել էր նրանց, պատժել՝ իր ունեցած գրեթե անսահմանափակ իշխանությունը գործի դնելով: Իսկ այժմ Բուղան հստակ ծրագիր ուներ. չէր բավարարվում երկրում ունեցած իր առաջավոր դիրքով և ուզում էր միանձնյա իշխել բոլորի վրա: Ռաշիդ ադ դինը, ցույց տալու համար Բուղայի զորությունը, վերապատմում է երկու էմիրների՝ Սադր ադ դինի և Թոգաչարի զրույցը, ուր արտահայտվում է նույն միտքը, ինչ որ կար Ստ. Օրբելյանի «Ժամանակագրությունից» վերևում մեջբերված հատվածում. «Բուղան իր համար թագավորություն է նախապատրաստել, քանզի անում է այն, ինչ ուզում է՝ առանց թագավորի ու էմիրների խորհրդի հրահանգների և իր կամքով ծախսում է փողերը: Ոչ ոք Արղուն խանին որպես թագավոր չի մեծարում, այլ միայն Բուղային: Նույնիսկ Թավրիզի վալին՝ էմիր Ալին, ոչ մի ուշադրություն չի դարձնում սուրհանդակների վրա, որոնք Թավրիզ են գալիս յառլիկով ու փայիզայով. եթե չունեն Բուղայի ալ-թամգան, անօգուտ վերադառնում են»[22]: Իր նպատակին հասնելու համար զորապետը դիմում է գործնական քայլերի. «Ահա այսպես խորհուրդ ի մեջ առեալ, յինքն գրաւէ զսիրտս ամենայն մեծամեծացն ի ծածուկ»[23]: Ռաշիդ ադ ադինը վկայում է, թե Բուղան լավ էր հասկանում, որ առանց որևէ արքայազնի օժանդակության Արղուն խանի դեմ ելնել չի կարող, ուստի սուրհանդակ է ուղարկում Ջուշկաբի[24] մոտ և առաջարկում է իր օժանդակությունը իլխանական գահը տիրելու գործում: Պետական իշխանությունը, ինչպես փորձում էր համոզել Բուղան, բոլոր գրված ու չգրված օրենքներով վերապահված էր հենց Ջուշկաբին, սակայն դեպքերի բերումով այժմ Արղունինն է[25]: Բուղան նման քայլի՝ գահը «օրինական» տիրոջը վերադարձնելու փորձ արդեն ուներ: Ջուշկաբը, որը նույնպես խորամանկ մեկն էր, իսկույն կռահում է Բուղայի մտադրությունը, հիշում է Թագուդար-Ահմեդ խանի տխուր

---

[19] *Ֆ ր ի կ, էջ 73:*

[20] *Օ ր բ ե լ յ ա ն, 1861, էջ 315:*

[21] *Ժամանակագրություն, էջ 30:*

[22] Р а ш и д - а д - д и н, с. 119.

[23] *Ժամանակագրություն, էջ 30:*

[24] *Ջուշկաբը Արղունի հորեղբոր որդին է, Հուլավու խանի երկրորդ որդու՝ Ջումուկուրի անդրանիկ որդին:*

[25] *Տե՛ս* Р а ш и д - а д - д и н, с. 120.

վախճանը, որը նույնպես նրա զոհն էր, ինչպես համոզված էր Ջուշկաբը: Իր անձի հետագա ապահովության և իլխանի առջև դավադրությանն անմասն երևալու համար դիմում է շատ զգուշավոր քայլի. Բուղայի սուրհանդակի միջոցով բարևներ ուղարկելուց զատ, նա պահանջում է բոլոր համախոհների գրավոր համաձայնությունն ու անունները[26]: Ինչը և կատարվում է. Բուղան ու իր դավադրակիցները ուղարկում են պարտավորագիր՝ իրենց անուններով ստորագրված:

Արքայազնը չի մերժում Բուղային, որի համար արդեն խնդիրը գրեթե լուծված էր թվում, վստահեցնում է իր համակամ լինելու մեջ, և կողմերը պայմանավորվում են իրենց զորքերով հանդիպել Մուղանի դաշտում: Ե՛վ Բուղան, և՛ Ջուշկաբը, բնականաբար, անկեղծ չէին միմյանց հետ. նրանք երկուսն էլ ունեին իրենց նպատակները. առաջինի համար արքայազնը լոկ միջոց էր մոտենալու, ապա տիրելու նվիրական գահին, իսկ Ջուշկաբն առերես համաձայնության միջոցով բթացնում էր Բուղայի զգոնությունը և դավադրության մասին հայտնում թագավորին՝ Արղունին: Վերջինս էլ երկար սպասել չի տալիս: Պատկերավոր է ներկայացնում Օրբելյանը. «Իսկ կամքն վերին, որ յայնպիսի մահուանէն յափշտակեաց զնա և թագաւորեցոյց, նոյն և աստ տնաւրինեաց, զի զծածուկ խորհուրդ սրտի նորա ծանոյց ազդմամբ Արղունին. և յաւուր պայմանին, յորում կամէր խորհրդակցաւքն կոխել զազատն արքունի Բուղայն, ինքն իսկ Արղունն, վառեալ սուսերաւք և զրահիւք ԴՌ այր յաւուր տարէմտին իւրեանց և խաղա[յ] յանկարծ առաւաւտուն ի վերայ բանակին և տանն Բուղային, զոր գիտացեալ փախստեայ անկանի ի շամբ մի մեծ և երթա[յ] ի տուն Աւջլա խաթունին, և անկանի յոտս նորուն՝ զի զերծուսցէ զարիւն նորայ. ընդ որում երագ ժամանաեալ ըմբռնէին և հանեալ անտի չարամահ սատակէին՝ ընդ նմին և զամենայն ազգատոհմն և զարու զաւակ նորին ջնջեին. և զամենայն խորհրդակիցսն ի մեծամեծաց սատակեցին՝ զԱրուխն եղբայր նորին ի Բաղդատա[յ], զՈւճանն, հազարապետ զՄաժուն, հազարապետ զԽարաունաս թուխլուխն, հազարապետ զԱշակ թուխլուխն, հազարապետ զՂազանն ի Շարուր չորս հազարապետ զՋալալադին սահիպն, զՇիմոն քահանայն ասորի և բժշկապետ և այլս բազումս ի մեծաց և ի փոքունց: Եւ եղն այս ի մեծ դաշտին Մուղանայ. յեզր Կուրա[յ], որ էր անհուն գետոց ասպնջական»[27]:

Ռաշիդ ադ դինը չի վկայում այն մասին, թե հետապնդվող Բուղան գնում է Օլջեյ (Օրբելյանի «Ժամանակագրությունում»՝ Աւջլա) խաթունի մոտ՝ օգնության խնդրանքով: Նա խոսում է Արղուն խանի զարմանախառն զայրույթի մասին, երբ Մուղանի դաշտում ինքն է բազմաթիվ զորքով դիմավորել Բուղային, խոսում է վերջինիս մեղայականի մասին, երբ բռնվելիս ասում է, թե թագավորի դեմ ոչինչ չունի, այլ դավադրությունը կազմակերպել է, որպեսզի հաշվեհարդար տեսնի իր թշնամիների հետ[28]: Սակայն Ջուշկաբը առաջ է բերում այն գրավոր փաստաթուղթը, որ դավադիրներն ուղարկել էին իրեն, և ամեն ինչ պարզ է դառնում Արղուն խանի համար: Բուղայի գլուխը սրի մեկ հարվածով հենց Ջուշկաբն է կտրում: Սակայն մինչև գլխա-

---

[26] *Նույն տեղում:*

[27] *ՄՄ, ձեռ. № 8481, թ. 212ա–212բ, Ժամանակագրություն, էջ 30-31:*

[28] *Տե՛ս* Р а ш и д - а д - д и н, с. 121.

տելը կառափնարանում էմիրներից մեկը ոտքով հարվածում է նրա կրծքին՝ ասելով. «Դու թագավորությանն ու գահին էիր ծարավի, ահա քեզ հատուցում դրա համար»[29]: Դաժան հաշվեհարդարից չեն խուսափում բոլոր նրանք, ում Արղունը կասկածում էր դավաճանության մեջ: Բուղայի հետ գործակցելու համար մեղադրվում և սպանվում է վրաց Դեմետրե թագավորը, ավելի ուշ՝ նաև նույն Ջուշկաբը, որի ջանքերով բացահայտվել էր դավադրությունը: Ե՛վ Ստ. Օրբելյանը, և՛ Ֆրիկը իրենց երկերում հիշատակում են դավադիրների անունները. առաջինը, բնականաբար, ասվում են Բուղայի և Արուխի անունները, հետո արդեն մնացածներինը:

Մոնղոլական տիրապետության ժամանակ Հայաստանում աստիճանաբար գերիշխող դիրք էր գրավում Սյունյաց նախարարական տունը: Սակայն ստույգ հայտնի չէ, թե այս դավադրության ժամանակ նա ինչ դիրք է գրավել: Հավանական է, որ այս դեպքում դիվանագիտական չեզոքություն էր պահպանվում Սյունիքի տիրոջ՝ Տարսայիճ Օրբելյանի կողմից, որը միաժամանակ վրաց թագավորի կողմից նշանակված աթաբեկ էր[30]: Սակայն նա միաժամանակ նաև շատ ջերմ հարաբերությունների մեջ էր մոնղոլական վերնախավի հետ, ինչի սկիզբը դրվել էր դեռևս ավագ եղբոր՝ Սյունյաց մեծ իշխան Սմբատի կողմից և շարունակվելու էր որդիների միջոցով: Ստ. Օրբելյանը՝ Տարսայիճ իշխանի որդին, նույնպես այցելել է մոնղոլ խաներին: Երկու կողմի հետ բարեկամական հարաբերություններ պահպանելու միտումը ենթադրում էր, որ Օրբելյանները պետք է ստանձնեին զուտ դիտորդի կարգավիճակ: Ստեփանոս մետրոպոլիտի խոսքերից դա հստակ երևում է. նա անթաքույց համակրանքով է խոսում Արղուն խանի մասին, անվերապահորեն մեղադրում Բուղային ու նրա դավադրակիցներին և միաժամանակ ափսոսանք արտահայտում վրաց թագավորի մահվան կապակցությամբ, որն անմեղ էր, և որի մահը «մեծ և անհնարին» սուգ բերեց ողջ քրիստոնյա աշխարհին, քանզի «… զրպարտեալ թագաւորն Վրաց Դեմետրէ՝ բաղբաղելով եդին ի վերայ բարուրս մահու և տարեալ սպանին տարապարտ ի մեծ դաշտին Մովկանայ յեզր գետոյն Կուրայ ի թուին 738»[31]: Խաչատուր Կեչառեցին, որը նույնպես ժամանակակից է եղել այս իրադարձությանը, «Ողբ վասն աւերման տանս արեւելեան» քերթվածում ներկայացնում է այն բոլոր անհատներին, որոնք իրենց գործունեությամբ ազդեցություն են թողել ոչ միայն Հայաստանի, այլև հարևան՝ «արեւելեան» երկրների վրա և որոնք արդեն ողջ չեն: Նա ցավ է ապրում վրաց թագավորի եղերական մահվան համար.

Զարքայն չիշխեմ յիշել զվրացի՝
Զատլասերեսն ըզԴեմետրէի,
Որ դեռ քրրտունքն ի վայր կու հոսի
Միրտըն քաշած ու դեռ կենդանի[32]:

---

[29] *Նույն տեղում:*

[30] *Օ ր բ ե լ յ ա ն, 1859, էջ 173:*

[31] *Օ ր բ ե լ յ ա ն, 1861, էջ 315:*

[32] *Խ ա չ ա տ ու ր Կ ե չ ա ռ ե ց ի. Տաղեր, աշխատասիրությամբ Ա. Դոլուխանյանի, Երևան, 1988, էջ 19: Կեչառեցին այս տաղը գրել է 1289-ից որոշ ժամանակ հետո, քանի որ այստեղ հիշում է նաև*

Ստ. Օրբելյանն այս թագավորի նկատմամբ ջերմ, նույնիսկ հարազատական վերաբերմունք ունի, քանի որ վերջինս մեծացել ու դաստիարակվել էր իր հոր՝ Տարսայիճ Օրբելյանի տանը և նրա հովանու ներքո, ապա նույն Տարսայիճը «բազում ջանիւ և օժանդակութեամբ նստուցանէ յաթոռ հօր իւրոյ թագաւոր Վրաց յ721 թուականին»[33]: Ստ. Օրբելյանը համոզված է, որ թագավորին դավադրության մեջ կասկածելու միակ պատճառը Բուղայի հետ ունեցած խնամիական կապերն էին. «… զի զթագաւորն Վրաց Դեմետրէ, վասն խնամութեան նորին, որ տուեալ զդուստրն իւր ի հարսնութիւն Բուղային, կալան և եդին ի բանդի, որպէս թէ համախոհ էր նորին. և յետ բազում հարցուփորձութեանց և ամենևիմբ անպարտ լինելոյն, սպանանեն զնա ի նոյն դաշտի և ջնջեն իսպառ զթագաւորութիւն»[34]:

Բուղայի արարքը, բնականաբար, չէր կարող արդարացվել հայ հեղինակների կողմից, որոնք Արղուն խանին համարում էին աստվածադիր թագավոր, և անիծված էր այն մարդը, ով կհանդգներ նրան ընդդիմանալ: Տարբեր ձեռագրերի հիշատակարաններում և վիմագիր արձանագրություններում[35] Արղունը հիմնականում ներկայանում է որպես քրիստոնյաներին սիրող տիրակալ. դրանով էր պայմանավորված նրա նկատմամբ հայերի համակրալից վերաբերմունքը.

«Եւ յաշխարհա[կա]լութիւն Արղաւն խանին [որ է ա]զգէն Նետողաց, որ տիրէր սեռ ազգայնոց և ազանաց ամենայն Ահարկու ի վերա անաւրէն և ապստամբ ազգացն մահ[մ]ետականաց, և յոյժ գտած և խնամած բարեպաշտ աղգաց քրիստոնեից ընտրեալ ի բանէն Աստուծոյ և աւծեալ շնորհաւք նորին և գաւազան բազկաւն ամենազաւր ըմբռնեալ խորտակել և մանրել զխստացեալ պարանոց անհնազանդից աւրինաց իւրոց»[36]:

«Ի ժամանակ Արղուն դանի
Քրիստոնէից հոյժ սիրելի»[37],

«Իսկ որ ուներ զաշխարհն հայրենի,
Արղուն դան և մեզ բարի,
Քրիստոնէիցս սիրելի,
Եւ զաշխարհս արար զահիւ ի լի»[38] և այլն:

«խաչի ծաղիկ», «հայոց ազգի լուսաւորիչ» Ստ. Օրբելյանին, որը 1303-ին էր մահացել (տե՛ս նույն տեղում, էջ 20):

[33] *Օ ր բ ե լ յ ա ն, 1861, էջ 311:*

[34] *ՄՄ, ձեռ. № 8481, թ. 212 բ, Ժամանակագրություն, էջ 31: Հ. Մանանդյանը կարծում է, որ Դեմետրե թագավորը Բուղայի անունն էր (տե՛ս Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. Երկեր, հ. Գ, էջ 315), սակայն, ըստ Օրբելյանի, նրանք խնամիներ էին. վրաց արքայադուստրը, թերևս, Բուղայի որդու կինն էր և ոչ թե Բուղայի:*

[35] *Տե՛ս օրինակ՝ Դիվան հայ վիմագրության, պրակ III, կազմեց Ս. Բարխուդարյանը, Երևան, 1967, արձ. № 219, էջ 78, պրակ IV, կազմեց Ս. Բարխուդարյանը, Երևան, 1973, արձ. № 821, էջ 198, պրակ V, կազմեց Ս. Բարխուդարյանը, Երևան, 1982, արձ. № 316, էջ 100, պրակ VI, կազմեցին Ս. Ավագյանը, Հռ. Ջանփոլադյանը, Երևան, 1977, արձ. № 140 ա, էջ 71 և այլն:*

[36] *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց Ա. Մաթևոսյանը, Երևան, 1984, էջ 557:*

[37] *Նույն տեղում, էջ 600:*

[38] *Նույն տեղում, էջ 601:*

Այս վաչկատունների նվաճողական արշավանքը Սյունիքի հոգևոր առաջնորդ Տեր Ստեփանոսն անվերապահորեն համարում է Աստծո կողմից հայերին ուղարկված հերթական մի փորձություն և պատիժ՝ գործած սխալների համար, երբ մի ազգ՝ տվյալ դեպքում նոր կազմավորված, դեռևս լիովին չձևավորված ցեղային խմբավորումները, ընդամենը որպես պատժելու միջոց է հանդես գալիս մեկ այլ ազգի համար: Դեռևս Մեթոդիոս եպիսկոպոսի տեսիլում[39], որը թարգմանել է Ստեփանոս Սյունեցի եպիսկոսպոսը VIII դ., արտահայտվում է հետևյալ միտքը. «Ասաց Մովսէս ցորդիսն Իսրայելի՝ ոչ զի սիրէ զձեզ Տէր Աստուած տանել յերկիրն աւետեաց ժառանգել զնա, այլ վասն անօրէնութեան բնակչաց նորա:

Այսպէս և զորդիսն Իսմայելի ոչ զի սիրէ զնոսա Տէր Աստուած, տայ զօրութիւն աւերել զերկիր քրիստոնէից. այլ վասն անօրէնութեանն որ լինի. վտանգ այսպիսի ոչ եղն նոցա և ոչ այլ լինիցի երբէք»[40]: Մի ավետարանի հիշատակարանում կարդում ենք. «[Գրեցաւ... ի հայրա]պետութ[իւն տեառն] Յակոբա, ի թա[գաւոր]ութիւն Լևոնի, յաշխարհակալութիւն և [յա]ղթութիւն Արղու խանին, յայս նեղ և ի դառն ժամանակիս, որ հասել եկն ի վերայ մե[ր] վասն մեղաց մերոց, որ նախանձ կալեալ յաղագս քրիստոնէից և ըստ նախանձոյ նոցա եկան ազգն Նետողաց և գերեաց զաշ[խ]արհս ամենայն»[41]: Հայերն ունեին իրենց ազատագրական լեգենդը, ըստ որի՝ օտարի լծից իրենց պետք է ազատագրեր քրիստոնյա մի թագավոր կամ քրիստոնյաներին սիրող մի թագավոր. լեգենդը կարող էր ժամանակ առ ժամանակ շրջանառվող տեսիլների միջոցով ներկայանալ և ենթարկվել որոշ ձևափոխությունների՝ ըստ պահի նպատակահարմարության[42]: Այս դեպքում Ֆրիկը ևս «...տարվել էր այն պատրանքով, թե թաթարների բերած աղետներին ու պատահարներին վերջ պիտի դնի էլխան Արղունը, որին նա համարել էր «աստուածադիր թագավոր»: Այդ պատրանքի մեջ դժվար չէ նշմարել Արղունի հետ կապված տարածուն ակնկալությունների արձագանքներից մեկը: ... Արղունը... հատուկ յառլիկներով կոչ էր անում վերացնել «ամեն բռնություն» և «վիրավորանք», հոգ տանել հպատակների վստահությունը նվաճելու մասին»[43]: Համաձայն Ստ. Օրբելյանի՝ քրիստոնյաների աստվածն իր հովանու տակ է վերցրել Արղունին. «Իսկ Աստուածն քրիստոնէից յայնմ գիշերի դարձոյց զսիրտ մեծամեծացն առ Արղունն, զոր հանեալ ի բանտէ կապանացն՝ թագաւորեցուցին»[44]: Այս նույն վերին կամքն է հետագայում նրան ուղղորդում ճնշելու Բուղայի դավադրութ-

---

[39] *Պատարի եպիսկոպոս Մեթոդիոսի այս տեսիլը բավականին լայն տարածում է ունեցել միջնադարյան Հայաստանում: Այդ է վկայում այն հանգամանքը, որ այն մեզ է հասել ոչ միայն Ստ. Օրբելյանի Պատմության մեջ մի առանձին գլխով, այլև առանձին ընդօրինակություններով (տե՛ս օրինակ՝ ՄՄ, ձեռ. № 2644): Այս տեսիլի մասին տե՛ս Ն. Թ ա մ ա մ յ ա ն. Ս. Մեթոդիոսի երազը Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի պատմությունը» երկում.– «Հայագիտական հանդես», 2006, № 1, էջ 67:*

[40] *Օ ր բ ե լ յ ա ն, 1861, էջ 105-106:*

[41] *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 598:*

[42] *Այս մասին տե՛ս Ն. Թ ա մ ա մ յ ա ն. Տեսիլը որպես գրական-գեղարվեստական մտածողության դրսևորում.– «Էջմիածին», 2005, № Ժ-ԺԱ, էջ 95:*

[43] *Ա. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմությունից, գիրք առաջին, Երևան, 1957, էջ 251:*

[44] *Օ ր բ ե լ յ ա ն, 1861, էջ 312:*

յունը: Այս պատճառով է, որ ոչ ոք չպետք է հանդգներ դուրս գալ թագավորի դեմ, սակայն Բուղան դա արել է: Ֆրիկն իր վերոհիշյալ քերթվածում ունի Բուղային ուղղված այսպիսի տողեր.

Բուղա՛, դու ո՞նց կամիր նենգել,
Աստուածադիր թագաւորին,
Զոր քրիստոնեայքն ամէն հաւսար,
Ի յայստուծոյ կու խնդրէին[45]*:*

Բանաստեղծը, որն ունի մարդկային բարձր հատկանիշներ, զարմանում է և անկեղծորեն չի կարողանում պատկերացնել, թե այդ ինչպես է հնարավոր, որ Բուղան կամ ընդհանրապես մարդը մոռանա մեկ ուրիշ մարդու երախտիքը, եթե նույնիսկ մի պահ անտեսենք հպատակության հանգամանքը.

Բուղա էիր՝ չինքսան եղար,
Բեկլար-բեկի՝ իր հեծելին,
Չգիտեմ թէ զի՞նչ կամիր լիներ,
Դու չի՛ր որդին Չանկըզ դանին[46]*:*

Ֆրիկի համար պարզ է, որ զորապետը չէր վերլուծել իր հնարավորությունները, հստակ չէր պատկերացրել իր անելիքը, այլապես նա չէր դիմի այդ քայլին. ինչի՞ վրա էր դրել Բուղան իր հույսը, չէ՞ որ Չինգիզ խանի սերնդից չէր, իսկ իլխանության թագը կարող էին կրել միայն խանի ժառանգները, քանի որ այն տրվում է ի վերուստ: Ֆրիկը քաջատեղյակ էր մոնղոլական պալատական անցուդարձին, շատ լավ ճանաչում էր գլխավոր գործող անձանց, գիտեր նույնիսկ բոլորի տոհմաբանությունը: Այս իրադարձության թողած տպավորությունները գեղեցիկ առիթ են հանդիսացել, որպեսզի բանաստեղծն ընթերցողին հայտնի իր խոհերը՝ կապված դավաճանության, երախտամոռության, գայթակղության, տիրադավության, իշխանատենչության ու նման արատավոր այլ երևույթների հետ: Եվ դա անում է բազմաթիվ իմաստուն աֆորիզմների միջոցով: Իհարկե, դեպքերի ժամանակակից հեղինակը չի կարող լռել. նա պետք է բարձրաձայնի, որ Բուղան գրեթե հավասար էր Արդունին, սակայն գայթակղությունը կործանեց նրան, և որքան շատ է բարձրանում մարդը, այնքան ընկնելն ավելի ցավոտ է լինում: Բանաստեղծը համոզված է, որ աստված արդար դատավոր է, քանի որ չարն ստացել էր իր արժանին. Տերը «գետին է զարկել» դավադրության պարագլուխներին՝ Բուղա և Արուխ եղբայրներին:

Միջնադարյան գրականությունն ուսումնասիրող հեղինակները, բնականաբար, չէին կարող չանդրադառնալ այդ ժամանակաշրջանի կարևոր իրադարձություններին ու անձանց, որոնք գրական ստեղծագործությունների համար նախատիպ, հիմք,

---

[45] *Ֆ ր ի կ, էջ 73:*
[46] *Նույն տեղում:*

առիթ են եղել[47]: Այս գիտնականների աշխատություններն ուղղորդող մեծ դեր ունեն՝ XIII դ. մոնղոլական գերիշխանության տակ գտնվող Հայաստանի պատմությունն ու գրականությունը ուսումնասիրողների համար:

О ЗАГОВОРЕ ПРОТИВ ХАНА АРГУНА И ОТКЛИКАХ ОБ ЭТОМ В ЛИТЕРАТУРЕ

НАИРА ТАМАМЯН

Р е з ю м е

В середине XIII в. в странах Передней Азии утвердилось монгольское владычество. Среди этих стран была и Армения. Правителем монголов в этот период был хан Аргун, которого в свое время из тюрьмы освободил Бука–монгольский военачальник. Этот факт стал причиной того, что Буке было дано очень много полномочий. Несмотря на это, он в 1289 г. устроил заговор против своего государя хана Аргуна. Заговор был раскрыт, виновные были жестоко наказаны. Эти события отразились в трудах современников. А именно в “Истории Сюника”, “Анналах” Степаноса Орбеляна и “Об Аргуне хане и Букае” поэта Фрика. В связи с тем, что хан Аргун к христианам относился благосклонно и армяне видели в этом свое спасение, армянские авторы представляют его достойным правителем, а Бука осуждается и его смерть считается

---

[47] *Բանասիրության մեծ երախտավոր Ա. Ղանալանյանը, որը կազմել է Ֆրիկի տաղերի բնագրերի ժողովածուն, գրքի վերջում գետեղել է անձնանունների տեղեկատու-բառարան, ուր Արուխ անվան համար գրում է. «Թաթար խան (=դան): Բուղայի ժամանակակիցը: Խան է նշանակվել Հուլավու իշխանի կամքով» (Ֆ ր ի կ, էջ 120): Բուղայի դեպքում հեղինակը նույնպես գործածում է խան տերմինը և նշում «Չինքսան» (իշխանաց իշխան)» (նույն տեղում): Արուխը խան չի եղել, ինչպես և նրա եղբայր Բուղան. նրանք էմիրներ են եղել. խաները միայն պետության ղեկավարներն էին: Սա բառերի շփոթի հետևանք է: Ա. Ղանալանյանն իշխան է անվանում Հուլավուին, որը մոնղոլական չորս ուլուսներից մեկի գլխավորն է, իրանական-մոնղոլական պետության և թագավորական հարստության՝ Հուլավյանների հիմնադիրը: Բուղան իշխանաց իշխան է ըստ հայ տերմինաբանության, իսկ Հուլավուն իլխան կամ իշխան է ըստ մոնղոլների: Աբաղա խանի անվան բացատրության դեպքում էլ կան մի քանի վրիպակներ՝ մասնավորապես կապված գահակալման թվականների հետ (տե՛ս Ֆ ր ի կ, էջ 119): Որոշ վրիպակներ են սպրդել նաև Տիրայր եպիսկոպոս Մուշկամբարյանի հրատարակած Ֆրիկի «Դիվանի» առաջաբան-ուսումնասիրությունում. «Արղունին վերջին անգամ պատմության մեջ հանդիպում ենք 1882 թուին, երբ Սիւնեաց Սմբատ Օրբելյանը վախճանվելով անզավակ, «որդիացուցեալ ինքեան» յուր եղբորորդի Տարսայիճը» (Ֆ ր ի կ, Դիվան, էջ 51): Եղբորորդին Ստեփանոս էր՝ Սյունիքի ապագա մետրոպոլիտը և գիտնական պատմիչը, իսկ Տարսայիճը Ստեփանոսի հայրն էր և Սմբատի եղբայրը: Մեկ այլ դեպքում գրում է. «Հուլավուն 1262 թ, յուր եղբոր Աբաղայի որդուն՝ Արղունին ուղարկում է Խորասան, ուր և վերջինս մնում է ոչ միայն մինչև հորեղբոր մահը (=1265), այլ՝ դեռևս հոր կենդանության ժամանակ իսկ: (Կիրկ. 379)» (Ֆ ր ի կ, Դիվան, էջ 64): Սակայն Գանձակեցին, որին վկայակոչում է Տ. Մուշկամբարյանը, գրում է. «Իսկ մեծն Հուլաու ժողովեաց նոյնպէս զզօրս իւր բազմաձեռն և արար երիս յառաջս. զմինն ետ ի ձեռս որդւոյն՝ Աբաղա դանին, գումարեաց ընդ նմա և* զոստիկանն Արղուն *(ընդգծումը մերն է – Ն. Թ.), և առաքեաց ընդ Խորասան օգնել Ալղուին յայմն կողմանէ...» (Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի. Պատմություն հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 395): Ուրեմն նշանակում է՝ սրանք տարբեր մարդիկ են:*

справедливой. Вместе с изложением событий, они выражают свои суждения по поводу предательства, неблагодарности, искушения, властолюбия и т. д.

TO THE PLOT AGAINST KHAN ARGHOUN AND ITS LITERARY RESPONSES

NAIRA TAMAMYAN

S u m m a r y

In the middle of the 13th century the Mongol dominion was firmly established in the countries of the Front Asia. Armenia was among them. The ruler of the Mongols of that period was Khan Arghoun, who had been released in his time by Bougha - the military leader of the Mongols. The fact caused Bougha to be given great authorities. In spite of it in 1289 he hatched a plot against his king. The plot was discovered and the organizers were cruelly punished. These events reflected on the works of the contemporaries. Exactly in “The History of Syunik”, “The Annals” by Stepanos Orbelyan and “About Khan Arghoun and Bougha” by poet Frik. In connection with the fact that Khan Arghoun regarded the Christians with favour, and Armenians looked forward to their saving, in the works of the Armenian authors he is presented a deserving ruler, while Bougha is denounced, and his death is considered to be just. With the account of the events they express their judgements about treachery, ingratitude, temptation, love of power, etc.